

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակի առիթով՝ նրա մատենագրական վաստակից հատընտիր էջեր, մտածումի ու գաղափարի քանդակներ՝ որպես քարոզ, ճառ, հայրապետական պատգամ, խրատ և օրհնություն:

Խմբագրություն

*
* *

ՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ

1850. Կ. Պոլիս

Պատրաստեալ ելէք յուղի արդ ելանեմք 'ի յԱյրարատ
Եւ 'ի վիճակ սեպհական Արշակունեաց վեհ արքայից:
Դէտ ակն 'ի վեր ամբարձէք հա՛ երեւի Մասեաց գագաթ,
Եւ գըմբէթ Կաթուղիկէ եկեղեցւոյն երկնահանգէտ:
Միոյն 'ի գլուխ հանգչի տապանն ապրեցուցիչ արդար զարմին,
Իսկ միւսոյն տէրունեան խաչն եւ 'ի վերայ խաչեալն Աստուած.
Մին եհան 'ի գլուխ լերին անդրէն էած յաշխարհ թըշուառ,
Միւսն 'ի սուրբ լեառըն երկնից յարքայութիւն երանաւէտ.
Ըզմիով շընչեն օդոց փըչմունք սաստիկ սառեցուցիչք,
Ըզմիւսովըն հրացուցիչ հողմունք հոգւոյն քաղցրահոսան:
Ինձ աստանօր չէ 'ի դէպ զտապանն եւ զվեհ Կաթուղիկէն
Այսպէսեաւ համեմատեան գերագունին յաւելուլ փառս:

(էջ 29—30)

*
* *

ԵԿԵԱԼ հասի այժմ առ քեզ, ո՛վ դու տեղի ծնընդեան իմոյ,
Գաւառ Վասպուրական եւ հրոչակեալ քաղաքըդ Վան:

Ըզքեզ արդ առնում 'ի յերգ եւ գեղգեղեմ երկար նուագօք,
Դամ այսպէս, ոտիւք ոգւոյս ճեմիմ 'ի վայրդ գեղեցիկ.
Գոնէ սակաւ ինչ այսու առից 'ի քէն գանձուկ սրբոտիս:

*
* *

ՀՐԱՎԻՐԱԿ ԵՐԿՐԻՆ ԱՎԵՏՅԱՑ

1851. Կ. Պոլիս

...ՅՈՒՂԱԲԵՐ ընդ սուրբ կանանց 'լի բարձյալ մեր զյուղ հաւատոյ,
Մի՛ հանոթ բըրտի շինած, այլ 'ի մաքուր սըրտի անոթ,
Օ՛ն Մանկունք, հետևելով գնամք 'ի պարտեզըն Հովսեփա.
Առ քընարան Քրիստոսի՝ մեք շուրջ ընստիմք լո՛ւ անձայն.
Թող երգե ողբաձայն զյուր շարական Մեծըն Սահակ.
Այն ականց գոհարազարդ, զոր մատըն յուր շարահյուսյաց.
Որ Հիսուսի սուրբ Թաղման, ո՞վ, հիացող երգահանն է,
Եվ ո՞վ քան զայն կարե երգել ըզմահու Դատյանն:
...Ո՞վ, Գերեզմա՛ն, Գերեզմա՛ն, որ մահու դրան կափարիչն ես,
Եվ երկնից արքայության՝ դուռըն մըտից և ճանապարհ.
Համեն ազգաց և աշխարհաց երամովին դիմեն գան,
Թե հարցանեա՝ թե ո՞ւր երթայք, ասեն գնամք հԵրուսաղեմ.
Քրիստոսի Գերեզմանին երկրպագել մեք ուխտ ունիմք.
Կա՛ց դու հանդեպ Գերեզմանին տես դու ո՞րպես հոգվով ըղձիվ.
Համբուրե՛ն-համբուրե՛ն զվեմն անշարժ և կենդանի.
Եվ հաւատան քեզ, ո՛վ Տեր, թե դու մեռար, թաղեցար աստ.
Վա՛շ, մեռելոց աշխարհին, դու կյանս ետուր քո Հարությամբդ.
Անշա՛րժ մնասջիր, Գերեզման, Փրկչի մահվան հիշատակ:
...Մինչև ցարդ, ազնիվ Մանկունք, 'ի բոլոր վայրս Տնօրինական
Մարդացյալ Աստվածորդվույն, շըրջյալ ընդիս՝ հասաք 'ի լրումն.
Հրավիրեմ այժմիկ ըզձեզ և խաչակրացն 'ի վկայարանս,
Վեհագույն և հրաշակերտ 'ի սուրբ Աթոռըն Հակովբյանց,
Վեհագույն և հրաշակերտ 'ի սուրբ ձոնյալ Հայոց պարգև.
Բարձրացյալ հարմարապես 'ի գլուխ լերինըն Սիոնի.
Ուր հանգչի գլուխըն պատվյալ Առաքելույն Հակովբա
Որ ընդ յուրումն հարազատ խոստանային ըմպել զբաժակն:
Անդ 'ի հանգիստ կա և մարմնով, որ արդարո կըրեր զանուն,
Մյուս Հակովբ աշակերտ, որ Տյառնեղբայր հորջորջեր:
Նախ 'ի մատուռըն մըտյալ՝ տացուք համբույր Գըլխույն այնմիկ,
Որ պարծանք է հայոց ազգին, ում ժողովուրդ դիմե հուխտ.
Խընդրե առնու, քանզի Աստված փառավորե զծառայն յուր:

*
* *

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՆԻՑ

1866. Կ. Պոլիս

Մովսես Քորեք լեռնեն հԵգիպտոս կիջնա, Հիսուս երկինքեն հաշխարհ. մեկին ձեռք պատուհասի գավազան կա, մյուսին ձեռք խաչ և Ավետարան: Մովսես՝ որ մարդ էր, իբրև Աստված փարավոնին առաջ աճարկությամբ կխոսի. Հիսուս՝ որ Աստված էր, Պիղատոսին և Հերովդեսին ատյան իբրև խուլ կլռե: Մովսիսին հրովարտակ պատուհասի արյունով դրոշմված ողջ Եգիպտոսի անդրանիկներն կջարդե. Հիսուսի Ավետարանին հրովարտակ հանուր աշխարհին ներողություն կբերե: Ի՞նչ համեմատություն կա, մեկին մեջ մահ, մյուսին մեջ կյանք: Մովսես շոշափելի խավար բերելով եգիպ-

տացիք անատեսիլ գիշերի մեջ անկապ կը-կաշկանդե. Հիսուս ճշմարիտ լուսով բովանդակ աշխարհ կլուսավորե և խավարին կապերեն կարձակե մարդիկ: Մովսես Կարմիր ծով պատառելով միայն Իսրայելի ժողովուրդ հազատություն կհանե. Հիսուս ոչ հրեայն կխտրե, ոչ հեթանոս, այլ բոլոր մարդիկ խավարին իշխանության գերութենեն կփրկե: Մովսես կառաջնորդե դեպ ի Սինայի անջուր անապատ. Հիսուս դեպ ի երկինք. մեկին մարդ ապառաժ քարեն ջուր հանելու կզլանա. Հիսուս առատ է, կկանչե, որ ծարավին է եկեսցե առ իս:

...Երկնախոս վարդապետն կբանա նոր Ավետարանի փրկության մատյան, կսկսի մի առ մի ավանդել ինն Երանությանց դասն:

...Հիսուս երանի կու տա հեզոց, ո՛վ են այս հեզերն. զորս Աստված ի մարտ կհանե աշխարհիս բարկության դեմ. ջրհեղեղի դարուն ամբարտավան հսկայից դեմ՝ Նոյ արդար ապառաժ քարեն ջուր հանելու կզլանա. Հիսուս առատ է, կկանչե, որ ծարավին է եկեսցե առ իս:

...Երկնախոս վարդապետն կբանա նոր Ավետարանի փրկության մատյան, կսկսի մի առ մի ավանդել ինն Երանությանց դասն:

...Հիսուս երանի կու տա հեզոց, ո՛վ են այս հեզերն. զորս Աստված ի մարտ կհանե աշխարհիս բարկության դեմ. ջրհեղեղի դարուն ամբարտավան հսկայից դեմ՝ Նոյ արդար նահապետ, անաստված ազգաց դեմ՝ աստվածապաշտն Աբրահամ. սպառնացող Եսավին դեմ՝ Հակոբ հեզ. նախանձոտ եղբարց դեմ՝ փոքրիկն Հովսեփ. փարավոնին դեմ՝ Մովսես. Սավուղին դեմ՝ Դավիթ. աշխարհիս իշխանին դեմ յուր միածին Հիսուս. բարբարոս բռնավորության դեմ՝ Հիսուսի աշակերտներն:

...Ավետարանին գթության ձեռք գերիներուն շղթաներն կքակե, պարտատյարց մուրհակներն կպատառե, մերկերուն հանդերձ կու տա, օտարներ ի տուն կժողովե, կարոտելոց հաց կկարկառե, ծարավելոց ջուր. մեկ խոսքով ամեն խնդրողին կու տա, ամեն լացողին արտասուք կսրբե. այս գթու-

Խրիմյան Հայրիկի աշխատությունների հրատարակություններ

հովվության մեջ քաղց, ծարավ, միշտ տըրտունջ հուսահատություն, պատժախառն բարերարություն, ապերախտություն, բարկություն Աստուծո, բանակին կոտորումն, և այլ բազմադիմի հանցավորություն ժողովրդյան և պատիժ հԱստուծո. մյուսին մեջ կենաց հաց և ջուր, հավատք, լի հույս, սեր, խաղաղություն, շնորհք, ներողություն: Մովսես տասնեաբանյա օրինաց տախտակներն բարկությամբ կխորտակե. Հիսուս կշինե զայն Ավետարանին հեզության արվեստով: Մովսես աններող է, հայթայթանաց կրկուտ ժողովող խեղճ պառավ իսկույն կքարկոծե. Հիսուս շնացյալ կիներն ներողությամբ կարձակե: Մովսես ապերախտ ժողովրդոց հա-

թյան օրենք սիրո աղբյուրին վտակն է, որ կբղխի Ավետարանի ակնեն:

...Ավետարանի ճշմարտություն սրտի կրոն է, մարմնույն կրոն չէ:

...Ավետարանն է միայն խոովյալ աշխարհիս խաղաղության դաշնագիր. զոր խաչին և նոր ուխտին արյունով կնքեցն Հիսուս ու կընքարոզեն հանուր տիեզերաց:

...Հիսուս յուր Ավետարանի տապարով չարություն արմատեն կկտրե:

...Հիսուս վարդապետ յուր նորավարժ աշակերտներ կհանե փարիսեցվոց կեղծավորության դպրոցեն և կմուծանե Ավետարանին պարզության դպրոց:

...Հիսուս՝ յուր Ավետարանին ճշմարտություն բնավ չի հրամայեր բռնադատ կապերով ընդունիլ տալ. քանզի Ավետարան լույս է. լույսն ինքնին համատարած է, կծավալի և կթափանցե ընդունողներուն սիրտ: ...Հին կրոնք մահաշունչ էր. կենաց տեղ՝ մահ կընբուրեր, Ավետարանին ուրախության տեղ՝ սուգ կբերեր. լուսույն տեղ՝ խավար կածեր, երկնից տեղ գերեզման կբանար. արքայության տեղ՝ դժոխք կտաներ. մեկ խոսքով Աստված չիկար հին կրոնքին մեջ. ուր Աստված չիկար, այնտեղ մահ կթագավորեր, մարդույն համար ամենայն ինչ մահ էր:

...Մարդկային ընկերության պարտք և իրավունք փոխադարձ առաքինություն է. ինչ չափով որ կու տա, նույն չափով կպահանջե Ավետարանին արդարության կշիռ: Ուրեմն, ո՛վ դու, ի՞նչ կկամիս, որ ընկերդ քեզ ընե. եթե սեր՝ սիրե դու ևս. եթե պատիվ՝ պատվե դու ևս. ընկերեն սեր և պատիվ պահանջել քո իրավունքն է. այլ սիրել ընկեր ու պատվել քո պարտքն է:

*

* *

ՀԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ ԵՎ ԽԱՉԻ ՃԱՌ

1876, Կ. Պոլիս

Այժմ մանուկ Մկրտիչ ծերացած **Հայրիկ** եղեր է, ես էլ պիտի գամ հասնիմ քեզ. սակայն դու հոգվոդ մոտ ես կենաց աղբյուրին, աղոթե որդեգրիդ համար, դեռ անվճար պարտք ունիմ առ Ավետարան, առ ազգն և եկեղեցին, պարտքերս վճարեմ և ապա մեռնիմ:

...Հիսուսի խաչին ճառը Ձեզ համար գրեցի և Ձեզ կնվիրեմ, ո՛վ Խաչին զինվորներ, Ավետարանի պաշտոնյաներ, կենաց բան քարոզողներ և Քրիստոսի հոտին հովիվներ. դուք եթե սիրով կգրկեք Հիսուսի խաչը և ախորժանոք կընթեռնուք իմ Խաչին ճառը. օ՛ն ուրեմն, հոգվով հետ ինձ եկեք, երթանք-ելնենք Սիոնի վերնատուն. ուր Ավետարանին ուսուցիչ երկնից Վարդապետն կխոնարհի մինչև աշակերտաց ոտքը, կենդանի և գործնական օրինակ կավանդե մեզ և կասե. «Օրինակ մի ետու ձեզ. զի եւ դուք զնոյն առնիջիք»:

...Մտիկ արեք, ո՛վ դուք, սեր քարոզող վարդապետներ, Սերն, զսեր կավանդե, երկնախոս վարժապետ սիրո դասեր կուսուցանե. և քանի՞ խնամով կկրկնե. «Այս է պատուէրն իմ զի սիրեսջիք զմիմեանս»:

Ավա՜ղ մեզ, ուշամոռաց եղանք. հազարութ հարյուր տարի է այս դասերն Ավետարանը մեզ կավանդե. և մեք կկարդամք ժողովուրդին. տակավին ոչ մեք սորվեցանք՝ ոչ ժողովուրդ հասկցավ. սիրո դասը թողինք՝ հատելություն կրթեցինք զմեզ, սիրո կտակը տվինք՝ բանսարկվին նախանձն առինք, սերը կորուսինք՝ և գրգռիչ թշնամությունը գտանք: Այլևս ի մենջ ո՛վ կհամարձակի սեր քարոզել ժողովուրդին, երբ սիրո ճպռախոս վարդապետներս՝ սիրել չգիտեմք, հետ միմյանց ատելությամբ կվարիմք. և ի՞նչ մնաց, որ խաչն ու Ավետարանը մեր գրկեն թողումք, և սուր առնելով միմյանց կողը մխեմք:

...Երանի՜ թե մեք միայն զմեզ խոովեինք և ժողովուրդն անխոով մնար. ո՛չ՝ մեք կխոովիմք և շատ անգամ ևս անարգ միջոցներն ի գործ դնելով կխոովեցուցանեմք. և մերթ ևս քանի՞ ամոթ մեզ, երբ ժողովուրդը՝ խաղաղարար կլինի մեր մեջ, Ավետարանը մեր ձեռքեն առնելով՝ մեր պաշտոնն ի դերև կընհանե:

Հապա, պաշտոնակից եղբարք իմ, սիրեմք, որ խաղաղ մնամք. առնումք մեք նախ Քրիստոսի սերն ու խաղաղություն, և ապա ժողովուրդին տամք:

...Ո՛վ խաչակիր զինվորք, առեք յուրաքանչյուր Ձեր խաչերը հետ Քրիստոսին երթանք ի Գողգոթա: Ո՜հ, մեր խաչերը շատ թեթև են և մեք հետս կկասիմք. Հիսուս գնաց-հասավ Բեթելա սարին գլուխ և մեք կես ճամփուն վերա մնացինք:

...Հրեշտակ դու, որ Բեթլեհեմի մարեն Աստվածորդվույն ծննդյան ավետիս տվիր, և արդ Հովսեփա պարտիզի գերեզմանեն ավետիս տուր բոլոր աշխարհին. **Քրիստոս յարեաւ՝ ի մեռելոց:**

Հետ հրեշտակին դուք ևս տատրակ և սոխակ, որ Սողոմոնի փակյալ պարտիզին ծառասնանյայց վերա կճխայք ու ճվողեք՝ երգեցեք նորա սիրաբարբառ երգը. «Արի՜ եկ, գեղեցի՜կ իմ, աղավնի՜ իմ, կատարյա՜լ իմ, քանզի ձմեռն է անց, անձրևք անցին և գնացյալ մեկնեցան»: Այո՛, անցավ չարչա-

բանաց ձմեռը, եկավ-հասավ գարուն, թզենին ընձյուղեց բողբոջը, այգիները ծաղկեհոտը բուրեցին. զի **Քրիստոս յարեաւ՝ ի մեռելոց:**

...Փրկագործ տնօրենությանդ խորհուրդներն ավարտեցան, Հիսուս Փրկիչ:

...Այսպես ավարտեցիր Աստուծո իմանալի քաղաքն, ո՛վ իմաստուն ճարտարապետ, հիմն երկրիս վերա դրիր, գմբեթը մինչև երկինքը բարձրացուցիր. և դու միայն միջնորմն եղար. երկիրը՝ երկնից հետը, մարդիկը՝ Աստուծո հետը, մահկանացուք՝ անմահության հետը՝ սերտ և պինդ կապեցիր, և դու միայն հատեր մահուն երկաթե կապանքը, որ վեց հազար տարի զմարդիկ և զհոգիները դժոխոց աշխարհին հետը կապեց:

Ամենայն ինչ վճարեցավ, Տե՛ր այլևս աշխարհիս մեջ մարմնույդ գործակցությամբ բան չունիս: Ուստի ա՛ռ ձեռնասուններդ, Զիթենյաց լեռը ելիր, խաչատարած ձեռներդ համբա՛ռ, օրհնե՛ փոքրիկ հոտդ, տյառնագրե զեկեղեցին և բովանդակ աշխարհ. խոսի՛ր կրկին՝ ինչ որ պատվեր ունիս, տուր վերջին հրաժեշտը:

Եվ ի՞նչ են քո տիրախոս պատվերները՝ ավետարանիչ ծառաներուդ. երթալ հաշխարհ ամենայն, քարոզել քո կենաց բանը. ուսուցանել՝ ինչ որ պատվիրեցիր հրավիրակ առաքյալներուդ. պահել քո Ավետարան, որ ստրկացյալ հոգիներուն ազատությունն է. պահել քո հավատ, որ եկեղեցվո որդիներուն փրկությունն է. պահել քո սիրույդ զոդ, որով անջատյալ և թշնամացյալ մարդիկ իրարու հետ կապելով ասացիր. **«Դուք եղբայր էք»:**

Վարագա վանքը

*

* *

ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՅՈՒՐ

1876. Կ. Պոլիս

Հասա՛վ, հասա՛վ այն ազատաբեր ժամանակ. քեզ ավետիս կու տամ, ժո՛ղովուրդ, լռած լեզուդ և փակված բերանդ բա՛ց այսուհետև, խոսիր և գրե՛ որչափ սահմանադիր օրենք քեզ ազատություն կու տա. խոսի՛ր երբ կգրկվիս. խոսի՛ր դատավորաց առաջ երբ ապիրատ ձեռք զքեզ կապտակեն. խոսի՛ր և իրավունք խնդրե. «Եթէ չար ինչ խոսեցայ, վկայեա՛ վասն չարին. իսկ եթէ բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս»: Գիտցիր որ ազատ օրենք զքեզ չի փրկեր, եթե դու դարձյալ ստրկությամբ վարվիս քո ոսոխ դատախազիդ առաջ:

Ո՛վ բարեգուշակ Ժամանակ, դու բարի եկիր մեր աշխարհ, քեզ կակնկալեր և կապասեր Թուրքաստանի հինավուրց Մայր՝ որ ա-

մուլ էր և հրաշլուք հղացավ. ցավ երկունք կալավ զինքն իբր ծննդկանի. երկնեց-երկնեց և այսօր ծնավ մեզ համար մի նոր մանուկ Սահմանադրություն: Ցնծացե՛ք, ստրուկ ժողովուրդ, ցնծացեք և ողջունեցեք այս նորածին մանուկ և միանգամայն աղոթեցեք որ կայտառ մնա, ապրի, զորանա և զարգանա ի կատարյալ հասակ:

* * *

ՎԱՆԳՈՒՅԺ

1877, Կ. Պոլիս

Ո՞ տայր ինձ, ո՜հ, գեղեցիկդ Վան, Վասպուրական աշխարհի զարդն ու պսակ, որ ավերակդ անյունացյալ մոխրին վերա նստելով՝ արժանի լինեի զքեզ և քո որդիքներդ ողբալ, ինչպես ողբախոս Երեմիասն, որ լայր և կոծեր այրիամայր և գերեվարյալ Երուսաղեմի վերա:

...Ո՛վ տիրասեր և ժրաջան հայ մշակներ, հայրենյաց ագարակին մեջ այն ինչ միամտությամբ կաշխատեիք բեղմնավոր հունձերով երկիրը բարեշեն պահել և տիրոջ տիրասեր ծառայակիցներ հրձիգ արարին ագարակն, խելաթափ եղեն ու չմտաբերեցին թե այդ ոճիրն արքունի գանձուն և բոլոր հայրենակից ժողովրդոց հավասար զյան է:

...Չգիտեմք քո մեղքն ի՞նչ էր, ո՛վ անզեն և հլու-հնազանդ ժողովուրդ Վանա, դու ոչ զենք ունեիր և ոչ երբեք ըմբոստացար տիրող գավազանին դեմ. քո հավատարմության չափ հինգ հարյուր տարի է, և քո զենք միայն խոփն ու արոր. արվեստ և վաճառականություն քո զբաղումն էր. և միթե ա՞յս եղև հատուցումն քո հավատարիմ հպատակության:

...Թուրքաստանի վերանորոգ սահմանադրության տոնականին անշուշտ զոհ մի պետք էր, և այն փառավոր զոհ դու մատուցիր, ժողովուրդ Հայոց. բայց գիտցիր թե կանխավ քան զքեզ շատ զոհեր զոհվեցան այլ և այլ ժողովրդոց և պատերազմի դաշտերուն մեջ:

...Սակայն դուք մի վհատիք, Ավետարանի հարվածյալ որդիքներ. հույս առ ու քաջալերվե, ժողովուրդ Հայոց, երկհազար ամ է որ միշտ ջախջախվիս ու չես մեռնիր. պարսիկ, հույն, արաբացին և կովկասյան բարբարոս ազգերը միշտ արշավեցին ու քանդեցին քո հայրենիք. բայց դու անվկանդ՝ անհուսահատ տոկացող ոգի մի ունիս, որով կապրիս ու կմնաս մինչև ցայսօր:

«Հաւատք քո կեցուցին զքեզ», ասաց Քրիստոս, ուրեմն հավատա, որ երկնից Նախախնամություն արդար և բարերար է. քո սերմն ու արմատ պիտի պահե այդ բնիկ հողին մեջ, որ քո հայրենատուր ժառանգությունն է. ընդունայն կճգնին այն ձեռք, որ կաշխատին զքեզ արմատախիլ առնել:

Ելե՛ք ուրեմն, մի՛ նստիք և հուսահատ ողբաք այդ ապաժույժ ավերակաց վերա. ելե՛ք, վանեցիք, թաղեցեք այդ մեռելը, վրան կոթող մի կանգնեցեք ու գրեք այս հիշատակարանը. **«Աստ թաղեցավ Վանեցի հայ ժողովրդոց գանձն ու կյանք»:**

Այդ անհարիր մեռելին սգո հանդեսը կատարելեն հետո, ելե՛ք դարձյալ առեք բահն ու բրիչը, հորդեցեք-պեղեցեք ձեր ավերակները, դուք ձեզ համար ճարտարապետ եղիք, հիմը դրեք և շինեցեք ձեր ավերյալ տունն ու քաղաք. անցյալն էանց այլևս չի դառնար. ձեր դատն և իրավունք թե մոռանան աշխարհիս դատավորներ, թողեք հայնժամ թող Աստված տեսնա:

...Թե հիրավի՛ ձեր արիական նախնյաց նմանող հարազատ որդիքներն եք, այս հրոս սրոս ժամանակին մեջ ցուցեք ձեր առաքինության հանդեսը, զորացեք ու զորացուցեք վհատած որդիները, նկուն մի՛ լինիք փորձության առաջ՝ զի մարդուն կենաց ճանապարհ այս աշխարհիս վերա լի է դժնդակ փուշերով: Առաքինիք միայն զայն կոխելով կանցնին, իսկ վատասիրտներ կլքանին:

Կոխեցեք և անցեք, ո՛վ աշխատավոր եզինք, մի՛ թափառիք ու հեռանաք ձեր ավերակ ագարակեն, ելեք դարձյալ զույգ-զույգ յծվեցեք. ձեր սամոտիք պինդ կապեցեք ընկերական սիրով, հեծելով-փնչալով վարեցեք ու պատեցեք այդ տառապանաց ակոսն. ժիր մշակներ, գոգնոց կապեցեք, լի հուսով ցանեցեք ձեր վաստակասեր քրտնաց սերմն. պահ մի ևս սպասեցեք, զի ձմեռ է, ձյուն և սառնամանիք ծածկեր են մեր աշխարհ:

Գարուն մոտ է, Հայո՛ց աշխարհ, և պիտի գա ծիծեռնակ քեզ ավետիս տա, ...և դու տեսած հայնժամ թե ի՞նչպես այդ մոխրակույտ ագարակն անդրեն բողբոջելով կկանաչի, և քո վերջին բարգավաճ կլինի քան զառաջին:

Դու լույս և արև կսիրես, ժողովուրդ. լույս և արև զքեզ պիտի վերածնին, քո հրայրյաց երկիր մարգագետին կդառնա:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

*
* *

ՀԱՅԳՈՒՅԺ

1877, Կ. Պոլիս

Ողբա՛մ զքեզ, Հայո՛ց աշխարհ, զի քո կյանք ողբերգություն է. ամեն դար և ժամանակ երբ աղետներ զքեզ պատեցին, դու միշտ աղետներուդ հետ մի ողբերգու ծնար, քո առաջին ողբերգուն Մովսես Խորենացին է, որ հազար երկերյուր ամ հառաջ ուժգին ողբաց զքեզ, մինչ վերացավ գլխեդ Արշակունի թագ, մինչ ջախջախեցավ իշխանությանդ գավազան, նսեմացավ քո փառք, կորյալ ազատությունդ, և դու տիրական բարձրութենեդ խոնարհելով իջեր ծառայական ի ստրկություն. դու որ քան զհյուսիսականս վեհագույն կդնեիր քո գահը:

...Օրհնյալ ես դու, Հայոց աշխարհ. որչափ քանդող թշնամույն ձեռք կջանար զքեզ իսպառ ճռաքաղ անել և որթերդ հարմատեն հոտել, դու անդրեն նոր-նոր ուռեր տալով կբողբոջեիր: Հավատա՛ դու, Հայո՛ց աշխարհ, թե Աստուծո օրհնությունն էր որ միշտ անապական պահեց քո ճիռերդ. զի դու Քրիստոսի ճշմարիտ որթին վերա հաստատված ես:

Բայց դարձյալ ողբամ զքեզ, անտերունջ ժողովուրդ Հայոց. զի քո մնացորդ ճիռեր անխնա ճմլեց ժանտ և ժպիրհ քյուրտ. սորա համար քո կյանք՝ թե՛ առաջին և թե՛ վերջին, միշտ ողբերգությամբ լի է. Մովսես չէ միայն որ զքեզ կողբա. Եղիշեն, Ղազարիկ, Լաստիվերտցին, Մեծոփեցին, Առաքել պատմագիր, այս ամեն իրենց ժամանակին մեջ զքեզ ողբացին, ո՜հ, ես էլ քո ողբերգուն եմ. երանի՜ թե հետինն լինեի, և այլևս չծներ քեզ ողբերգու. այլևս անպահապան այգիդ ճռաքաղ չլիներ. երթայր և այլևս չդառնայր անդրեն քո տառապանաց տարին և ժամանակ:

...Իբրև սրաթև արծվի, իբրև ճախրաթև բազե հանկարծ հասավ ու դարձավ քո վերա տառապանացդ օր. սև օր, սև գիշեր էր այն, և իբրև ծննդական մոր՝ ցավոց երկունք զքեզ ընկրկեց. դու արդ կհեծես և ճիչ կբառնաս. հույսդ՝ երկոտնաց մեջ է. կամ կծնիս ողջամբ ի նոր հազատություն, և կամ կմեռնիս այդ մահացու վերքերովդ. անե՜ծք այն ձեռաց, որ քո հանգստարանի գերեզման կկնքե թե այլևս ո՛չ գո հայն ու Հայաստան:

...Եփրա՛տ, Եփրա՛տ, մկրտարա՛ն սուրբ Գրիգորի հոգեծին որդվոց, ափունքներուդ վերա ինկած դիակները արյան հեղեղներ թավալգլոր բերելով քո ծոց կթափեն, և դու տո՛ւր ալիքներուդ՝ թող գլորե-տանի մինչև օվկիանու ափունք. Հայոց աշխարհի անմընունչ բողոքն է այդ: Կլսե՞ արդյոք և կտեսնա՞ աշխարհի արյան հանդիսատես խաղաղասեր Լոնտոն. թե ա՞յդ է գահ մեծին Անգղիո, որ քան զինքն հառաջ Ավետարանին հավատացող որդիքներ տարապա՞րտ մեռնին:

...Մի-մի կամ ուրույն-ուրույն գերեզման մի՛ փորեք այդ անտեր մեռելներուն, այլ բոլոր միահամուռ խոր վիհերու մեջ թաղեցեք. միայն խաչքարե նշան մի կանգնեցեք հողակարկառին վերա. ես աստ կարձանագրեմ նոցա սուրբ և անմահ հիշատակը:

Աստ կատարեցան քրիստոնեության և հայ անվան համար քյուրտերու անողորմ սրեն, Օսմանյան տերության հինգ հարյուր տարվան հավատարիմ հայեր:

Ո՜հ, Հայո՛ց աշխարհ, ո՜հ, աղետներդ անբավ-անկշիռ են, զորս կրեցիր դու այս նոր Լենկթիմուրի ձեռքեն: Ես ուշամոռաց եղա և չգիտեմ թե զո՞րն ողբամ: Քանդված գեղե՞րդ ողբամ, վարատյալ ժողովո՞ւրդ ողբամ, ի սար և ի ձոր թափառական ընտանիքնե՞րդ ողբամ, հայրենիքեն վարյալ գաղթական որդիքնե՞րդ ողբամ, հափշտակյալ կիներդ և կույսե՞րդ ողբամ, քանդված վանքերդ և պղծյալ տաճարնե՞րդ ողբամ, անհաց, անապրուստ, անճարակ ու թշվառ կյա՞նքդ ողբամ, վաստակավոր մշակնե՞րդ ողբամ, որ բարդ ի բարդ հնձվեցան ու որպի նման փռվեցան արտերուդ մեջ, որոց արյան ցընցուղներ ցայտեցին և կարմիր ներկվեցան ցորենի հասկեր և հատիկներ:

...Այլ մխիթարյա՛ց, մխիթարյա՛ց, Մա՛յր Հայաստան, զի դու սովորած ես ցավեր ու վիշտեր կրել. հազար անգամ մահաբեր երկունքներ զքեզ ընկրկեցին և դու հանդուրժելով անցուցիր երկունքներդ և ողջ մնացիր: Հազար բյուր աղետներ տեսար, միշտ որդիքներդ գրկեդ վարատեցան, բայց դու երբեք չվհատեցար, զի ոգիդ պողպատի նման պինդ և անկոտրում է: Հազար անգամ գերեզմանին դուռը հասար, թշնամիներդ տեսան՝ ծափ զարկին, թե վա՜յ, մեռավ Մայր Հայաստան, և դու անդրեն Ղազարոսի նման վերածնար գերեզմանեն:

...Այս աշխարհ և աշխարհիս գահեր՝ ամեն գայթակղություն և որոգայթներ ունին, խեղճ և ստրուկ ժողովուրդներ բռնաբարված են և կգոչեն ազատությո՜ւն-ազատությո՜ւն: Այլ ոչինչ ճար չունին, դորա միակ ազատության ճար՝ լույս և կրթությունն է. դու զայն երբ ի ձեռս բերես, այնոր է միայն քո ազատության տոնահանդես:

*
* *

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ

1876, Կ. Պոլիս

Մեր ազգին և Հայոց աշխարհին ընտանեկան կազմության առաջին հիմնադիր Նոյ նահապետն է, ինչպես և ջրհեղեղեն հետո հանուր մարդկության նախահավն է. ուստի մեք Հայկա անունով՝ հայ կկոչվինք, Արամա անունով արմենյան. և երբեմն ևս թորգոմական կամ ասքանազյան. բայց այս նահապետները բոլորն ևս Նոյի կրտսեր որդի Հաբեթի սկզբնական սերունդեն են, ասոր համար մերթ ևս հաբեթական ազգ կկոչվինք:

Ինչպես որ կկարծվի, դրախտը Հայաստանի մեջն էր, և կյանքն այդ աշխարհեն սկսեց. նախախնամ տեսչություն այնպես կամեցավ. որ դարձյալ մարդկության սերունդին աճումն՝ դրախտի մոտեն սկսի: Ուստի Հայոց Արարատյան աշխարհը մարդկային ազգի նոր խանձարուր եղև. Նոյ նահապետ յուր բարեճոխ ընտանիքը Մասիսի հովանյաց և բնին տակ հաստատեց, որ այժմ Նախիջևան կըսվի. գրեթե հինգ հազար տարիեն ավելի է այս ավանդական անունը անկորուստ պահելով մինչև ցայսօր նույն անունով կկոչվի:

...Հայկա կյանքեն և թվականեն սկսյալ մինչև ցայսօր գրեթե չորս հազար այսքան տարի կհաշվեն. օրհնյալ է Նախախնամության անունը, որ դեռ Հայոց ազգը և յուր հիշատակը կենդանի պահված է: Այսչափ ժամանակի ընդարձակ միջոցի մեջ. կան ուրիշ ազգերը որ հայրենիքեն գաղթականությամբ ելած են, կան որ սպառած ու նվազած են, ինչպես Հայոց դրացի ասորին: Հայոց ազգը և յուր ընտանիքը, որ մեծագույն մասամբ յուր հին հայրենյաց մեջ, պահպանեց ու կպահպանե դեռ յուր նախնյաց հողն ու գերեզմանը: Ամեն վիշտ ու տառապանք կրեց, աշխատեց Նոյա տնեն, Մասիսի սարեն չհեռանալ, ուր Քրիստոս Հայաստանյայց եկեղեցվո Կաթուղիկեն բարձրացուց:

...Իսկ դուք, ո՛վ որդիք Հայոց, որ մեր հին Նահապետական տան ժառանգորդ զավակներն եք. հոն հայրենի տունը կացեք, մի՛ հեռանաք, սիրեցեք Մասիսը, յուր տապան և ուրբ Գրիգորի Կաթուղիկեն. մշակեցեք Նոյա ձեռատունկ այգին՝ Արարատա դաշտը, մի՛ թողուք հավիտյան Նահապետական տուն ընտանիքը. դուք Մասիսին հարազատ որդիքներն եք, Մասիսը ձեր հայրենի սեփական տունն է. թող շեն մնա ձեր տունը, շեն մնա Նոյա գերդաստանը, բարգավաճին օրհնյալ Հաբեթի որդիները, արդար Նահապետին գերեզմանին աղերս և զոհին ծուխ մինչև երկինքը ելնե, երկինք հաշտվի, յոթնագունյան աղեղն կամար կապե դրախտի աշխարհին վերա և դրախտի բնիկ որդիներ ցնծան թե Աստված ընդ մեզ է, յուր հզոր աջով կօրհնե և կպահպանե Նոյա տուն և նորա տարամերժյալ ընտանիք:

...Ամուսնական արմատեն ընտանիքը կըհաստատվի, ընտանիքեն ժողովուրդ, ժողովուրդեն այլ և այլ ազգերը, ազգերեն իշխանական պետությունները և պետություններեն ընդհանուր մարդկային համաշխարհական ընկերություն:

...Ժողովուրդը և ազգերը միայն հացով չեն ապրիր. թագավորությամբ և ազատությամբ չեն բարձրանար, այլ առավել բարոյական կյանքով. և այդ կենսական կյանք տվողը ընտանիքն է: Ուշադիր եղիր, և ես նկարագրեմ քեզ:

Ժողովուրդը եթե կհառաջդիմե՝ յուր առաջին քայլը ընտանյաց սրահեն կառնու. եթե կլուսավորի, յուր լույսը ընտանեկան ճրագեն է. եթե կմիանա, յուր ոգին և կապն ընտանիքն է. եթե կզորանա, յուր ուժ և բազուկն ընտանիքն է:

...Ժողովուրդ եթե կզեղծանի՝ ներքին յուր զեղծման սկզբնավորությունը ընտանիքեն է, եթե բարոյական կենսանի կյանք չունի՝ մեռելություն ընտանիքեն է:

...Իսկ մեր հայրենի աշխարհին և նույնիսկ գաղթական հայոց համար ընտանեկան անդեպ բաժանումն միշտ վնասակար է. մանավանդ երկրագործ ժողովրդոց համար, որոց ուժ՝ արդյունքը՝ ընտանեկան միության ու միաբան աշխատության մեջն է, եթե բաժանվին՝ միացյալ զորությունը կջլատի և իսպառ ուժաթափ կլինին:

...Կավարտեմ այս **Դրախտի ընտանյաց** դուռնաքյա երկույս վաստակ, դարձյալ նույն բան կրկնելով ու գրելով թե ընտանեկան տան հաստատուն հիմն՝ ողջամիտ կրթություն և ուղիղ դաստիարակությունն է:

*
* *

ՍԻՐԱՔ ԵՎ ՍԱՄՎԵԼ

1878, Կ. Պոլիս

Դրախտի ընտանիքեն հետո, Սիրաք և Սամվել անուն նոր երկասիրությունս, զոր Հայոց հայրերուն համար գրեցի, դարձյալ ձեզ կնվիրեմ, ժողովուրդ հայոց. որո նյութ

և պարունակությունն՝ աշխարհիս կյանքի կրթական դասերն են, զորս բարի հայր Սիրաք կավանդե յուր զարգացյալ Սամվել որդվույն:

Սիրաք յուր դասերն կխոսի աշխարհիս բազմադիմի առարկաներու վերա, և Սամվել մտադյուր ունկն կդնե: Սիրաք հայրական և բնական սիրով կավանդե մարդկային կենաց ամենակարևոր խրատներ, և Սամվել որդիական հնազանդությամբ կընդունի հայրախոս

...**Ցանկալի** որդյակդ իմ Սամվել, կյանքիդ առաջին շրջանի դասերն ավարտեցի. թույլ տուր ինձ որ փոքր մի հանգչիմ, միտքս ու հոգիս կազդուրի, թե ողջ մնամ ես, և Աստված զքեզ ողջ պահե, մի բարեդեպ ժամանակի մեջ կսկսիմ դարձյալ խոսիլ երկրորդ շրջանի դասերդ. զի դեռևս գրել կսիրեմ, ոգիս հոժար է. և դու լսել ու կարդալ կսիրես, ոգիդ փույթեռանդ է, գիտես ու կճանաչես քո հառաջդիմության ժամանակ:

Վանի բերդը

դասերը, որ կկրթե ու կմարզե զինքն յուր կենաց հառաջդիմության հասպարեզ:

...Սոսկ դպրոցական ուսումներ բավական չեն հայոց զարգացյալ պատանիներուն համար, որ նոր կթևակոխեն աշխարհի կենաց շրջանին մեջ. այլ պետք է զի նոքա Սամվելի նման ականջ դնելով միշտ բարեխրատ լինին ու հառաջդիմեն դեպի լավագույն կյանք. որո միջոցը միմիայն ուղիղ դաստիարակության ձեռքն է, որ կուղղե և կվարե զիրենք:

Սիրաքն այդ կրթական ձեռք հորինեց և կուտա հայոց հայրերուն ձեռքը. թե սիրաբար ընդունիք, ո՛վ դաստիարակ հայրեր, Սիրաքա տքնող ձեռքն ու գրիչ այլևս պիտի շարունակե յուր բարոյախոս դասեր:

Հայրական ու կրթական դասերս խնամով պահե հուշիդ, միշտ հիշե թե՝ և ես քանի՞ խնամով և սիրով խոսեցա քեզ, ես քո սերմանացան մշակն եմ, որդյակ, այս իմ սև-սև գրեր իբրև մի-մի ցորենահատիկ սրտիդ պարարտ երկրին վերա ցանեցի այժմիկ. երկինք յուր արևով և անձրևով բուսուցանե, և Աստված աճեցուցանե, ինչպես կխոստովանի Պողոս: Դու պտղաբեր լինիս այնչափ մինչև միույն տեղ հարյուր բերես, և ես ու քո հայրենյաց կարոտ որդիքները՝ ուրախ-ուրախ վայելենք քո առատ ու շահեկան արդյունքը:

Քրիստոս յուր աջով զքեզ օրհնե, ինչպես օրհնեց յուր մշակ աշակերտները. և դու եր-

թալով պտղաբեր լինիս, և քո բարի պտուղն ու հիշատակ մնա աշխարհիս վերա:

Ես քո հայր Սիրաք ամենայն խնամով ավանդեցի քեզ այս դասեր և դու երկյուղած հնազանդությամբ լսեցիր. բայց գիտցիր, որ միայն լսելով չեն արդարանար. այլ առնելով և ուսուցանելով: Եվ դու այժմեն ուխտ դիր որ իմ դասերս որդիներուդ ավանդես և այսպես հորդվոց հորդի, թոռնե ի թոռ շարունակվելով՝ անմոռաց և կենդանի կմնա Սիրաքա հորդ խրատներ ու դասեր. որով տիրապես կատարող կլինիս Առակաց բանին, Որդյակ, զօրեցես իմ մի մոռանար և զբանն իմ պահեսցե սիրտ քո, զի երկայնավուրբք լիցիս ի վերա երկրի:

Վարե՛, որդյակդ իմ Սամվել
Ուղի՛ղ վարե զմանն և ակոս.
Արձակ դաշտերն են մեր արտեր,
Պարարտ բերուն և բարեբեր.
Եվ ես ցանեմ ցորնի հատեր.
Քաղե՛նք հուսով բազմապատիկ.
Օրհնյա՛լ է հողն և մեր սերմեր,
Օրհնյա՛լ՝ մշակք եզնամոլներ,
Օրհնյա՛լ է անդ և անդաստան,
Օրհնյա՛լ՝ Աստված,
Որ տա անձրև և արև.
Օրհնյա՛լ վաստակ երկրագործին,
Արդար ազատ ի դժրանաց:

* * *

1894, Էջմիածին

ՊԱՊԻԿ ԵՎ ԹՈՌՆԻԿ

Սիրելի Թոռնիկ, ե՛ս նորե՛ն և կրկի՛ն զքեզ պիտի պսակե՛մ: Դու մի՛ կարծեր, որ եկեղեցվո, կամ քահանայի պսակ քեզ բավակա՛ն է: Այո՛, հոգևորապես և Աստուծո՛ օրենքով բավական և շա՛տ է: Բայց եթե Պապիկ ա՛յդ պսակի վերա յուր պսա՛կ չդնե, դո՛ւ անոթի՛ կմեռնի՛ս:

...Ազնի՛վ Թոռնիկ, ի՛մ խորհրդավոր պսակի՛ն նշանակությո՛ւն ա՛յս է. քահանան զքեզ պսակեց Շուշանի՛ն հետ. Պապիկն, այսո՛ր զքե՛զ կպսակե **հողի՛ն** հետ, **գութանի՛ն** հետ, **դաշտի մշակության** հետ: Եվ ինչպես Շուշանին հետ կապեց զքեզ քահանա՛ն, և դու տե՛ր ես մինչև ի մահ, կարող չե՛ս զինքը թողուլ, այնպես ևս Պապիկն զքե՛զ պսակելով, կկապե՛ **մայրենի՛ երկրին** հետ, որ հավիտյան **չպիտի թողուս**՝ որ մե՛ր հայրենի Պապենակա՛ն սեպհականությո՛ւն է:

...Թոռնի՛կ այժմ երկո՛ւ կի՛ն ունի: Իմացե՛ք, մի կինն Շուշա՛ննն է, որու հետ պսակվեցա՛վ սուրբ ամուսնությա՛մբ. մի՛ կինն էլ հայրենատո՛ւր ժառանգությա՛ն հո՛ղն է, որու հետ ես կապեցի՛ Հայր Աբրահամու օրհնությա՛մբ: Շուշան զավակներ պիտի բերե Թոռնիկին համար, հողն էլ հա՛ց պիտի տա բոլոր ընտանյաց համար: Կաղոթեմ, որ Աստված պահե Շուշա՛ննն և շա՛տ ապրի, բայց Շուշանն մահկանացո՛ւ է, թե մեռնի՛, Թոռնիկ մի ուրիշ շուշա՛ն էլ կգտնի: Իսկ եթե հո՛ղն մեռնի, է՛ն ժամանակ բոլոր Պապկե տանն ընատնի՛ք ի միասին կմեռնի՛ն: Եվ ինչպե՞ս կմեռնի հողն, որ Ադամեն մինչև էս օր կա ու կմնա անմահ: Խոսեմ ձեզ, թե հո՛ղն ինչպե՞ս կմեռնի: Ա՛յն անբախտ օ՛րն, երբ Թոռնիկ ձեռք մահե՛ն քաշելով՝ հողագործությունն չի՛ շարունակեր. կամ հարստանալով կբարձրամըտի՛. այլևս ամո՛թ կհամարի գյուղին մեջ, կամ գյուղական ընկերությանն հետ ապրել. կթողո՛ւ գյո՛ւղն ու հող՝ կերթա քաղաքացի՝ կլինի: Եվ կամ դժբախտ օրեր կհասնին յուր վերա, երբ հուսալով թե շատ հողեր ունի, պարտք անելով իրարու վերա կբարդե. պարտատեր հողեր կգրավե, ո՞հ, Թոռնիկն անհող կմնա: Ահա ա՛յն օրն, հողն Թոռնիկին համար կմեռնի՛:

...Այսպե՛ս, Թոռնիկ, հո՛ղն պետք է կենաց և մահու օր. սորա՛ համար Պապիկն զքեզ հողի՛ն հետ կապե՛ց ու պսակե՛ց, **որ պի՛նդ գրկես զհո՛ղն. չթողո՛ւս որ ուրիշներ ձեռքեդ հափշտակե՛ն, դու անհո՛ղ մնաս, ստրո՛ւկ լինես, երթաս ուրիշի դռներ վարձկա՛ն մշա՛կ դառնաս:**

...Իմ ժառանգությունն, որ կթողո՛ւմ քեզ, ոսկի չէ՛, այլ ոսկիեն շա՛տ ավելի թանկագի՛ն ու շահաբե՛ր է: Ի՞նչ է ոսկին, որ տեղ մի չի կենար, այլ **ժիվայի** պես կցրվի՛, կերթա ու կչքանա՛, շատ անգամ էլ ճարպիկ գողեր ական բանալով կգողանա՛ն ահագին դիզած գանձեր:

Ե՞ս կթողո՛ւմ քեզ մե՛ր հայրենի ժառանգություն, դաշտե՛ր ու հողե՛ր, որ միշտ իր տեղն անփոփո՛խ, հաստատո՛ւն է: Կթողում քեզ գութա՛ն երկու փոխ տավարներով, կթողում կթան կովեր ու հարյուրավոր ոչխարներ: Էսոնք են ահա՛ պապկե կարմի՛ր ոսկի՛ներ:

...Թոռնի՛կ, կյանքդ ու վարքդ ուղի՛ղ պահե, շիտա՛կ քալե, որ որդիքներդ էլ քե՛զ հետեվին. չլինի՛ որ խեչափառին պես միակողմանի քալելով, խրատ տաս ձագերուդ թե՝ ուղի՛ղ քալեցեք: Գիտցիր՝ որ նոքա պատասխան պիտի տան քեզ. «Հայրիկ մեք կտեսնամք թե ինչպես կքալես»:

Ուխտիվ կպատվիրեմ քեզ, Թոռնիկ, կյանքիդ բոլոր գործերու մեջ ուղղությունն պահե. պետք է գիտնա՛ս, որ ուղղությո՛ւն կհավելու քե՛զ ժողովուրդին վարկ և վստահություն, որով բարի համբա՛վ և պատի՛վ կստանաս ժողովուրդին առաջ:

Ամենամե՛ծ բարոյական հարստություն է քեզ համար, Թոռնիկ, եթե կարենա՛ս ժողովուրդին սե՛րն ու համակրությո՛ւն գրավել դեպի քեզ. աշխարհի բովանդակ ոսկին՝ դորա հետ չի հավասարիր:

...Հայրենի եկեղեցվո հավատք, երկյուղած և անկեղծ Աստվածապաշտություն, հեզ և բարեհամբույր բնավորություն. սե՛ր, որ յուր ընկե՛ր անձին պես հավասար կսիրե, արդարությո՛ւն, որ յուր և ընկերին բաժին հավասա՛ր կբաշխե, բարի խղճմտա՛նք, որ երբե՛ք ընկերին վնաս կամ զրկանք չա՛ներ. ավելի կսիրե զրկանք կրե՛լ, քան զրկե՛լ. ժողովրդասիրության ոգի՛ն, որ միշտ ժողովրդին բարի՛ն ու շա՛հ կմտածե, զվարթամիտ առատաձեռնությո՛ւն, որ շատ սիրելի է ժողովուրդին, մեծագործք ձեռնարկությո՛ւնք, որ հասարակաց համար կլինի, այսինքն եկեղեցի՛, դպրո՛ց, հիվանդանո՛ց, աղքատանո՛ց, որբանո՛ց,—զանազան նվիրատվությո՛ւնք կտակ և այլն՝ ինչ որ ժողովո՛ւրդի կյանքի՛ն և հառաջդիմությա՛ն համար պե՛տք են:

...Ահա՜ Թոռնիկ, ա՛յս է ժողովրդասիրության արդյունք. աշխատիր ա՛յդ արդյունք և փա՛ռք ձեռք բերել, որ մեռնելե հետո անմահ մնաս, ժողովուրդն զքեզ հիշե և քո՛ հիշատակն օրհնե՛:

...Սիրելի գյուղացիք, այս կորստյան ճանապարհեն ազատվելու համար, պետք է մեզ համար անխոտո՛ր ուղի՛ղ ճանապարհ, և ի՞նչ է որ շիտակ ուղի՛ն կբանա մեր աչքին առա՛ջ, այդ չէ՛ թե ցորեկվա՛ն արև՛ն է, գիշերվան լապտերն ու ճրագն է. ո՛չ, այդ աշխարհի լույսե՛ր բավական չե՛ն մեր կյանքին համար. եթե մե՛ք մտավորական լո՛ւյս չունենանք, **որ է ուսո՛ւմն և կրթությո՛ւն,** զոր կստանա՛ մարդ յուր մանկական հասակեն: Ուստի կրթեցե՛ք ձեր մատաղ մանուկներն, որ մեծանան մարդ լինին, թող բացվի նոցա մտքին աչքը՝ իբրև կո՛ւյր չշրջի՛ն աշխարհի՛ս վերա. կրթեցե՛ք նաև ձեր աղջիկնե՛րն, որ խելացի՛ տնտե՛ս և բարի՛ մայրե՛ր լինին. պետք է գիտնաք որ տան շինություն, կարգավորյալ տնտեսությո՛ւն միայն կիներո՛ւն ձեռքով կլինի: Միթե կիներ մարդ չե՞ն, հոգի ու միտք չունի՞ն. Տեր Աստված կին՝ իբրև ամուսին տվավ այր մարդուն, ոչ թե միայն զավակ ծնելու համար, հապա իբրև ընկեր և օգնակա՛ն տվավ, որ աշխատության մեջ գործակից լինի:

...Դուք էնպե՛ս կկարծեք ու կդատիք, որ երբ աղջիկնե՛ր գրել ու կարդալ սորվին, լեզվա՛նի ու անզգա՛մ կդառնան, և այլևս իրենց բնական պատկառանք և համեստությո՛ւն կկորցնեն: Ձեր ա՛յս դատաստա՛նն շա՛տ սխա՛լ է. օրինակ մեր աչքին առա՛ջն է, մեր բնակած գյո՛ւղ, երկո՛ւ հարյուր տուներն ավելի է. մեր գեղի՛ն կիներն ամենքն ևս հավասարապես տգե՛տ են, գրել կարդա՛լ չգիտե՛ն, դուք ի՞նչ կասեք, այդ ձեր ասաց անզգա՛մ և լեզվանի՛ կիներ պակա՞ս են միթե: Դուք չգիտե՛ք դեռ, թե ամեն չարաբարոյությա՛ն աղբյուր **տգիտությո՛ւնն է.** և կիներու տգիտություն ավելի՛ վնասակա՛ր է մի ընտանեկան գերդաստանին, քան թե այր մարդոց:

...Է՜, սիրելի՜ Թոռնիկ, ժամանակ հասած է, որ հոգի՛ս ավանդե՛մ, հրեշտա՛կ կսպասե, տակավին մի վերջին կտակ ունիմ քեզ, զոր պետք է ամենայն հավատարմությամբ և ճշդությամբ կատարես և ժառանգես Պապկե օրհնություն:

...Թոռնի՜կ, գերեզմանիս վերա՛ մի խաչքար տնկե, և այսպե՛ս գրե հիշատա՛կս՝

«Ա՛յս է տապա՛ն առջակեցի՛ Պապկէ՛ն, որ հո՛ղ ու մա՛ճ սիրե՛ց, իր թոռնիկի՛ն հողագործութեա՛ն դասե՛ր խօսե՛ց, իր կտա՛կն աւանդե՛ց ու մեռա՛։ Որք հանդիպի՛ք, ասացէք՝ Աստուա՛ծ ողորմի՛ Պապկէ՛ հոգւոյն»:

*
* *

ԹԱԳԱՎՈՐԱՑ ԺՈՂՈՎ

1900, Լոնդոն

Ցանկալի է, հույժ ցանկալի,
Խաղաղություն մեր աշխարհին,
Խաղաղություն թագավորաց,
Խաղաղություն ժողովրդին.
Խաղաղություն հրեշտակ երկնից
Խաղաղություն բերավ աշխարհ,
Խաղաղություն թողուց ավանդ,
Ո՜հ, կորուսաք խաղաղություն.
Քա՜վ, մի՞թե մենք ամբարիշտ եմք:

Հերիք այսքան մեծության տենչ,
Բավ և շատ է, սահման դրեք,
Հերիք անթիվ զենք ու բանակ,
Զինվորական տուրք անքանակ
Ժողովրդի բառնալ քամակ,
Բարդելով բեռըն ծանրագույն
Անտանելի և դժնդակ,
Ազգեր ողջույն հեծեն ողորմ,
Բողոքում են մինչև հերկինս:

Մի՞թե կարծեք արդար Աստված
Անտես առնե յուր դատաստան:

Բավ է, դրեք սուրն ի պատյան,
Ողջունեցեք խաղաղություն:

*
* *

ԽՈՍՔ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԽՐԻՄՅԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ

1873 օգոստոս 3-ին

Այսօր իմ արձակման օրն է, կաղաչեմ, որ թույլ տաք այս տաճարին մեջ, հայոց երեսփոխանության առաջ, մի քանի խոսք խոսիմ. և արձակում խնդրեմ այս Ատյանեն, որ 1869 թվույն սեպտեմբեր 4-ին յուր քվեի ազատ ընտրությամբ զիս կապեց և Տարոնեն վարեց մինչև ցայս վայր: Նույն տարվո նոյեմբեր ամսո սկիզբը, Պոլսո Մայր եկեղեցվո բեմին վրա մեր գահակալության հանդեսն կատարվեցավ: Զգիտեմ, կհիշե՞ք, այն իմ Ծաղկազարդի օրը, ես խոսք տվի Ձեզ և ուխտեցի այսպես. «Երեսփոխա՛նք և ժողովո՛ւրդ հայոց, դուք զիս բազում դժվարությամբ հայս գահ բարձրացուցիք, կուխտեմ անա՛ հանդիման Ձեր, որ առանց աշխատության ես ինքնին կիջնամ այս գահեն, խոնարհ հարգանոք համբուրելով համայն ազգի կնիքը կրող Ձեր վճռագիրը. զի օրինոք կապեցա. կփափաքիմ դարձյալ օրինոք արձակիլ: Միայն սա կաղաչեմ, վասն փառաց եկեղեցվո և հայոց ազգին, խաղաղությամբ թողե՛ք որ երթամ:

Այո՛, մեծ ակնկալությամբ ընտրեցիք զիս ու բերիք. գիտե՛մ, դժվարին է դյուրությամբ թողուլ: Ի՞նչ էր արդյոք Ձեր և հանուր Թուրքիո հայոց ակնկալությունը: Անավասիկ. կակնկալեիք որ Խրիմյան Հայաստանյայց եկեղեցվո փառք կհավելուր. կհուսայիք թե նա եկեղեցվո պաշտոնեից աղավաղ դրությունը կվերանորոգեր. կհավատայիք որ նա անդադար քարոզելով՝ դպրոց, դաստիարակություն, լույս և այլն. ազգային հառաջդիմության կառք կվարեր և դեպ ի յուր նպատակ կտաներ: Թո՛ղ այս մեծ ակնկալություն, մի ևս այն էր, թե Խրիմյան, իբրև սահմանադրաբար պատրիարք նա ինքն ձեռնհաս պիտի լինի շուտ և արագապես յուր արծվի թևերով սահմանադրությունը բանալ ու տանել-սփռել Հայոց աշխարհին վերա. քաղաքացին և շինական, գիտուն և ռամիկ առհասարակ միահամուռ մկրտել՝ լուսավորել և նոր սահմանադրական ժողովուրդ կազմել: Առավել քան զայսոսիկ, ամենամեծ ակնկալություն գավառացի ժողովրդոց այն էր, թե Խրիմյան պատրիարք եղավ, ուրեմն ավետի՜ս, պետք էր որ ազատվինք հարստահարության ամեն ճնշումներե:

...Իմ սրտի զեղուն զգացմամբ և անկշիռ երևակայությամբ չափեցի թե արդյոք Տարոն թողում, Վարագ թողում, իմ այն փոքրիկ ագարակնե՛րը, հորս կաշխատեի և կմխիթարվեի գոնե դուզնաքյա վաստակոք, ու երթամ Մեծն Բյուզանդիոն հայոց պատրիարք լինիմ, պիտի կարենա՞մ ասկե ավելի ազգին շահաբեր լինել: Անկեղծաբար խոստովանելով՝ ես կճանաչեի զիս, թե պատրիարքությանն բարձր Աթոռին վայելուչ հատկություններ չունեի, ոչ իմաստությամբ, ոչ ուսումնականության հանճարով, ոչ քաղաքագիտությամբ և ոչ մի քանի լեզվաց հմտությամբ: Այսչափ տկարությամբ հանդերձ, քա՛վ թե փառասիրության տենչանք մղեց զիս հայս պաշտոն. ոչ, այլ միայն ազգի սերն և հայրենյաց օգնելու եռանդն:

...Այս դատաստանին դեմ **Այսօր և Հավիտյան կԲողոքեմ.** զի Խրիմյան հառաջ քան զվաթսուներորդ թվական 1820 ապրիլ չորս՝ անդստին ի մորե սահմանադրութենեն հառաջ սահմանադրական ծնած է և ցորեկ արեվուն լուսով աշխարհ եկեր է, խիստ **Դըժվարին է զանի իբրև Հակասահմանադրական ամբաստանել:** Ես սահմանադրությունը գրկել կուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ ճշդել ու սեղմել, մինչև գրկիս մեջ մեռնի:

...Ներողություն կխնդրեմ, այն ամեն թերությանց համար, զոր իբրև սխալական մարդ գործած եմ. Ներողություն կխնդրեմ համայն երեսփոխանական դասեն. Ներողություն կխնդրեմ իմ վաստակակից կրոնական ժողովո ս. հարց դասեն. Ներողություն կխնդրեմ քաղաքական ժողովո մեծապատիվ անդամներեն. ես զձեզ չամբաստանեցի, այլ դրությունն ամբաստանեցի, որո ուղղությունն և փոփոխությունն օրենսդիր ժողովույն կպատկանի:

Այլևս կմնա ինձ օրհնել համայն հայոց ազգը և հրաժեշտ մատուցանելով առ երեսփոխանությունդ հայոց՝ Վահանա Գողթնացվույն պես պաղատիլ.

«Արձակեցէ՛ք, որ տեսանեմ զորչափութիւն աւերածոց երկրին իմոյ հայրենեաց»:

Թույլ տվեք այս Աթոռեն ելնեմ և հոն նստիմ. թերևս այսու խաղաղության օրինակ մի ընծայեմ իմ հաջորդիս: Թո՛ւյլ տվեք, եթե իբրև պատրիարք՝ չի կարացա՝ իբրև Խրիմյան վարդապետ գործել, թերևս իբրև Խրիմյան՝ կարենամ իբրև պատրիարք գործել:

Երթաս բարյավ, Արծվի՛, ասացեք, գնա՛-գտիր Վարագ քու սիրած խուցն ու գրիչ և սակավիկ մի թանապուր: Հո՛ն մնացիր, զի նավ խոովյալ փութա ի Նավահանգիստ: